

բնան բերած վանի նշանակեցներ կէտը՝ նոյն իսկ ձևագրութեամբ պատահում են Ասորեստանական գրութիւնում 11 ցուցակներին և 18 իւրեզոգաֆներին մեծ մասը փոխառնված է Ասորեստանականից։ Մնացեալ նշանները գոյացել են անշուշտ տեղային պարագայից ազդեցութեանց տակ։ Ընդհանրապէս խօսելով, վանի արձանագրերը կազմում են չորրորդ *) սեպագրական, լիովին կանոնադրեալ, սխտեմա՝ Ուրուքեան վանի արձանագրերը կանգնած են միայնակ առանց թարգմանութիւնների՝ հակառակ քաղաքականութեանը, այս պատճառաւ չը կայ մի որ և է յուսալի կէտ հեցարան նրանց վերածնութեան համար, բացառելով այն ամենը, ինչ որ առած է ասորեստականից։ Բայց կրկին ակամայից կասկածանք է ծագում։ Ասորեստանական նշանակեցները, տեղափոխվելով դէպի վան, չէ որ կարող էին այլալիւ իրանց նշանակութիւնը, թէն պահպանել են իրանց ձևերը։ Ուրեմն ամեն բան մեզ անյայտ է։ Թէ չի ֆոտ, թէ լեզուն և թէ ժամանակը։

Սրանից յետոյ պ. Պատկանեանը մի առ մի մատնացոյց է անում այն քսան և երեք (բացի Շուլցի քառասուն երկուսից) վանի արձանագրերը, որք գտնված են վերջին ժամանակներում, անուանելով նրանց աղբիւրները։

Եթէ չը յիշենք Գրոտեֆենդի անունը, վանի սեպագրերի վերածնութեան առաջին աշխատանքը պատկանում է կորովամիտ և բազմակողմանի Հինկսին (Ed. Hincks) իր յօդուածով On the Inscription of Van. Սա առաջին և ծանրակշիւ փորձ է անում այս սեպագրերի մակնութեանց համար և մատնացոյց է առնում մի քանի այն դիւքերը, որոնց ի նկատի պիտի ունենան ներքեւ, որոնք ուզում են վանի արձանագրերի վերածնութիւններովը պարագայել Հինկսից յետոյ, քսան տարուայ ընթացքում, ոչ ոք չէ պարագում այս վերածնութիւններով, ոչ ոք չէ սեպագրագէտները կողմակի ցոյց են տալի այս արձանագրերի վրա։ Սրանց թուումն է Ֆիլոսոֆա (Լուցասո *), որի գործը գրած միջոցները գիտական արժէք չունեն և այս պատճառաւ մնացին առանց հետևանքի։ Լուցասո ի միջի այլոց կարծում է թէ վանի արձանագրերի լեզուն սանսկրիտ լեզուի մօտիկ է։ 1871 թվին լոյս է տեսնում Ֆր. Լետտրանի Lettres Assyriologiques առաջին հատորը, որի երկրորդ նամակը նուիրուած է, եթէ ոչ յատկապէս այս սեպագրերի ընթերցմանը, գոնեա հասու լինել նրանց իմաստին։ Այս երկամիտութիւնը խօսում է առաջին անգամ ոչ միայն սրանց լեզուի, այլ և ամբողջ բովանդակութեան վրա։ Ուրեմն, առաջին անգամն է, որ ուշադրութիւն է դարձած սրանց պատմական նշանակութեան վրա... Հինկսը, վանի սեպագրերի լեզուի վերաբերմամբ, ցոյց է տալի մի քանի յատկանիշ նշաններ, բոլորում այս լեզուն պիտի ընդունվի որպէս արիական տեսակներից մէկը։ Լայարդ յայտնի չէ ում կարծիքն է առաջ բերում, ասելով թէ վանի արձանագրերում թաթարի կամ մօզգօլեան տարրեր են նշանակում, իսկ Գէորգ Բոլխովն թէ՛ այս լեզուն ազգակցութիւն ունի մարաց սխտեմայի և Բաբելոնի ակկադիականների հետ։ Լետտրան այս ամեն զաղափարները հերքում է և ձգտում է ցոյց տալու թէ վանի արձանագրերի լեզուն վրաց լեզու է։ Պ. Պատկանեանը հերքում է այս վերջին միտքը, բացատրելով մի առ մի Լետտրանի գտած, ալարդիեան և վրաց լեզուների մէջ, անյայտողակ քերականական համեմատութիւնները և ակներև ցոյց է տալի, որ Լետտրանի երկամիտութեան մէջ լեզուազոյտութիւնը ամենանաւագ կողմերն են։ Վերջապէս հերթը հասնում է Մորգանի երկամիտութեանը *) (Գերմանական արեւելեան ընկերութեան հանդիսի էջերում, Այս աշխատանքի հետեանք այն է դուրս գալի, թէ վանի սեպագրերի լեզուն պատկանում է արիական լեզուի գերազատանին և ըստ այսմ՝ սա հայոց լեզու է, իստակ հինաւորաց հայոց լեզու, և ի հարկէ այժմեան հայերէնից շատ հեռի, եթէ ի նկատի ունենանք այն հազար տարուայ ժամանակամիջոցը, որ բաժանում է մի-

մանցից այս երկու բարբառը, այն ժամանակ դիրքը մեզ կը լինի սրանց զանազանութիւնը...—բայց այն լեզուն, որ Մորգանը առաջարկում է մեզ, աւելցնում է Պատկանեանը, որպէս հայոց հինաւորաց լեզուի մի օրինակ, ոչ թէ հայերէն արիական անգամ չէ, այլ մի առանձին լեզու։ Մորգանը ինքն էլ խոստովանում է իր յօդուածի վերջերում թէ այդ հինաւորաց հայոց լեզուի հոլովները նմանութիւն ունեն թուրքական լեզուի հետ, իսկ բայերի ֆրեկտիւները մօտանում են հնդկա-եւրոպական բարբառներին։—Մեզը չի լինի, հեղուած է պ. Պատկանեանը, մեր հոգուն, եթէ սկսենք պնդել թէ Մորգանի յօդուածին յարակցեալ գիտարկում (բառարան) չը կայ հայերէն մի բառ անգամ—ОБСЛЮТНО НИ ОДНАГО. Գերականական ձևերումն էլ չը կայ ոչ մի նմանութիւն հայերէնի հետ, այնպէս որ պ. Մորգանի ամբողջ երկարացութիւնները դուրս են գալի շատ ու շատ անձնական...։

Ինչպէս տեսանք վերում վանի գրութիւնների մէջ մասը փոխառնված է ասորեստանականի և Բաբելոնի նշանակեցներից, միւս մասը կազմում է տեղային գրականական բեքը, որոնց լեզուն մեզ յայտնի չէ։ Այս արձանագրերի լեզուի վերաբերմամբ մնում է մեզ յոյս դնել գիտութեան աշխատի աստղերի վրա, որպիսի են Օպպերտ, Բոլխովն և սրանց տաղանդաւոր հետեւողները։

Վանի արձանագրերը՝ համարեա բոլորը՝ ըսկվում են յայտնի բացականչութեան նշանաբանով դէպի վանի բարձրագոյն աստուածութիւնը։ Այս աստուածներից աւելի հնագոյնը պիտի համարել՝ hal-di, որ մինչև այժմ յայտնի չէ եղել ուրիշ աղբիւրներից։ Այս haldi-ի հետ բաժանում են վանի Օլիմպի նախագահութիւնը երկու ուրիշ աստուածները՝ S և իս պա ս և Պարնիս։ Այս երեքակով չէ կողմնակիւմ վանի աստուածների թիւը։ Շուլցի ամբողջ XVII արձանագիրը նուիրված է վանի աստուածներին և որոնք բացատրվում է թէ՛ որպիսի գոհաբերութիւն և ինչ քանակութեամբ բերում էին այս և այն աստուածներին։ Այս արձանագրի մէջ բովանդակվում է Հին Հայաստանի ամբողջ պատմութիւնը։ Օրինակի համար բերում ենք մի նախադասութիւն։ Հալդի S իս պա ս իս Պարնիս ալ ազգային աստուած ից (բերում ենք?) վեց ոչ իսար և մէկ ու խտ (?). Երևի այս նախադասութեան միտքը չէ հասկացվել ամբողջութեամբ, որովհետև հինց սրանից յետոյ անյայտաբար գալիս է կրկին Հալտի, որի համար նշանակված է այս անգամ ոչ թէ վեց ոչ իսար, այլ 17 գոմէշ և 34 ոչ իսար և այլն։ Այս արձանագրում տեղ են գտել 75—80 աստուածներ, որոնց անունները առանց մեծ բացատրութեան չեն կարգացվում։ Ըստ Մորգանի այսպիսի անուններ ունեն այս աստուածները՝ Khutui, Tura, Zibipara, Arsimit, Hamaspa, Didua, Vilardi, Atbi, Kuera, Adaruta և այլն։ Մի քանի աստուածներ անուանած են ոչ յատուկ անունով, այլ բաղադրի և վայրաց անուններով. դոր՝ աստուած S և իս պա ս քաղաքի և այլն, կայ ևս մի աստուած, որի անունը յիշեալ արձանագրում չը կայ և որին պատահում ենք Սարգոնեան արձանագրում. սա՝ Bagapartu, ինչպէս կարդում է Օպպերտ, կամ Bagmastuv ըստ Լետտրանի և Սմիթի։

Համեմատելով այս անունները այն անունների հետ, որոնց երկրպագում էին հայերը պատմական ժամանակում, այսինքն՝ Քրիստոսից առաջ VI դարուց յետոյ, մենք կը գտնենք այն եզրակացութեան որ VIII և VII դարերի միջում կատարվել է հայոց կրօնական և այլ վերաբերութեամբ, հիմնաւոր յեղափոխութիւն, աւանդական և քաղաքական վերաբերմամբ հայերը ընկնում են դրացիների հօր ազդեցութեանց տակ։ Արամազդը դառնում հայոց բարձրագոյն աստուածը, բայց Արիմանը, որպէս հայոց աստուած չէ յիշվում ոչ մի տեղ։ Ահա այն աստուածներն անունները, որք հաստատվել են Հայաստանում իրանի ազդեցութիւնից։ Արամազդը, Վահագնը, Միհրը, Տուրը։ Սանդրամետ և այլն։ Սեմականներից անցել են Հայաստան զանազան տարբերութեամբ՝ Նանէ, Բեկ, Նարդ և այլն։

Արձանագրերից ամենահինը ընդունված է համարել Շուլցի I և XXXVI. Առաջինում (I) խօսվում է մէկ թագաւորի, Լուսիբրիի որդու վրա։ Թագաւորն է այս Լուսիբրիի երբ և իցէ—յայտնի չէ, բայց սա վանի արձանագրերի

ամենահին անձն է հանդիսանում, Այս Լուսիբրիի որդու անունը առ ժամանակ պիտի կարգադրի այսպէս, Բեկիդուրուս։ XXXVI արձանագրում պատահում են Isbuisin-ին Բեկիդուրուսի որդուն։ Այս Խսբուինիսին նուիրված է և XVII արձանագիրը։ Այստեղ Խսբուինիսը երևում է ոչ միայնակ, այլ իր որդոյ Միսուասի ընկերութեամբ, որին վերցրել է նա, երևի, իրան իշխանակից։ Ուրեմն, Խսբուինիս, Բեկիդուրուսի որդին է, Միսուաս, Խսբուինիսի որդին, հուսկ ուրեմն, Միսուասը Լուսիբրիի չորրորդ ուղղագիծ սերունդն է։ XVIII, XIV, XV և Շուլցի ուրիշ բազում արձանագրերում Միսուասը անուանում է իրան Խսբուինիսի որդի և Վիտիտա աշխարհի և Տուսպա քաղաքի թագաւոր։ Երեւի այն է, որ վանի թագաւորները գէթ միանգամ չեն անուանում իրանց Ուրարտի և վանայ թագաւորներ, որպիսի անուններին մենք ստէպ պատահում ենք ասորեստանականների մէջ...։

Միսուասից յետոյ գալիս է նրա որդին Արգիտիսը, որին յաջորդում է նրա որդի Բեկիդուրուս II։ Սրանց թագաւորութիւնը տեղ է մօտաւորապէս 150 տարի։ Ասորեստանական աղբիւրներից մենք տեսնում ենք, որ այս թագաւորներից առաջ եղել են և ուրիշները, որք տիրում էին այս կողմերը, բայց այնու ամենայնիւ միայն այս հինգն են թողել յիշատակ վանի արձանագրերում։ Սրանց ժամանակը հարկաւոր է համարել Քրիստոսից առաջ IX—VII դարերի մէջ։

Այս է ահա վանի արձանագրութիւնների վերածնութեան կարճագոյն պատմութիւնը։ Հետեւել նամակում կաշառեանք ծանօթացնելու ընթերցողներին այս գրքի միւս գլխերի հետ։

Գառ. Եղաւթեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Շնորհակալութեամբ ստացանք մի փոքրիկ գրքիկ, որ այս օրերս մամուլի տակից դուրս եկաւ։ Դա պ. Հ. Տէր-Միքայէլեանից թարգմանված Ալֆոնս Գոգէի «Թզուկ» վէպիկն է։ Գրքիկը ծախվում է Կենտրոնական և Կովկասեան գրախանութիւններում յօգուտ Թիֆլիսի լեւալկան դպրոցի հայ աշակերտների ապագայ հայոց գրադարանի։ Գինը 30 կօպէկ է, տպված է Թիֆլիսում, Մովսէսյ վարդապետների և ընկ. տպարանում, ներկայ 1881 թվին։ Օտարաբաղաճացիք կարող են ուղղակի դիմել այս հասցեով, Тифлисъ Реальное Училище Г. Теръ-Микелову։

Շնորհակալութեամբ ստացանք մեր յայտնի հայագէտ պ. Էմինից նրա գրուածներից երկուսը։ «Сказанія о святыхъ Оадее и Варооломеѣ, апостолахъ Арменіи» և նոյնպէս «Новооткрытое армянское pendant къ посланію Публія Линтула въ Римскій сенатъ объ Іисусѣ Христѣ»։ Այդ երկու տետրակները տպված են Մոսկվայում։

Լսում ենք որ պ. Ա. Երիցեան գիտաւորութիւն ունի այս օրերս հայերէն լեզուով մի քանի դասախօսութիւններ կարդալ Արծրունու թատրոնում։

Կիրակի, 11-ին հոկտեմբերի, պ. Կազմըվ, ֆրանսիական երեւի ձեռնածուն, իր առաջին ներկայացում տուեց Արծրունու թատրոնում։ Ժողովուրդը բաւական շատ կար. երէկ պարոնը կրկին իր ներկայացումն և մինչև հետեւել կիրակի կը շարունակի ամեն երեկոյ ներկայացնել, ամեն անգամ փոխելով իր պրօգրամը։ Պ. Կազմըվ մի քանի բաներում մեծ ճարպիկութիւն ցոյց տուեց և հասարակութիւնը վարձատրեց նրան իր ծափահարութիւններով։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՏՐՈՏՏԵՐԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԿԱՊՈՑ ՏԵՏՐԻ ՄԷՋ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ

Երկու տեսակ Հայերէն կայ, հին կամ եկեղեցական լեզու որ կը գործածուի կրօ-

նական գրուածոց մէջ, և նոր կամ արդի Հայերէն որ աշխարհիկ լեզու կը կոչուի։ Երկուքն ալ հարուստ լեզուներ են և ունին ընդարձակ մատենագրութիւն։ Հայերէն այբուբենին որ քրիստոնէութեան ի Հայս մօտ գտնելէն քիչ ետքը հնարուեցաւ հասարակ է թէ հին և թէ նոր Հայերէնին։

Ամեն դաւանութիւնէ Հայոց մեծագոյն մասը կը խորհի Հայերէն, բայց կան տեղեր ուր հայք կորուսած են իրենց ազգային լեզուն։ Նա մանաւանդ կը գտնուին Հայեր որ Քրդերէն միայն գիտեն, ուրիշներ, ինչպէս Մարաինի Կաթողիկէ Հայք, որ Արաբերէն միայն կը խօսին, դարձեալ ուրիշներ՝ որոց լեզուն Խրքերէն է։ Կոստանդնուպոլսոյ մէջ կը հրատարակուի Հայերէն գրով Թըրքերէն երեք լրագիր այն հայոց համար որոց աւելի ընտանի է Թուրքերէնը քան իրենց մայրենի լեզուն։

Ընդհակառակն Հայաստանի մէջ կը գրուենք Յունագասն ժողովուրդ մը որ Հայերէն կը խօսի. կան նաեւ գնչուներ որ կը խօսին Հայերէն։

Հայք ընդհանրապէս արեւելեան ազգաց մէջ նշանաւոր են իրիւ հանձարեղ, հանգարտաբարոյ, աշխատասէր և հմուտ աւրուեստից։ Կ. Պոլսոյ մէջ կան Հայեր որ Օսմ. կառավարութեան քով մեծամեծ պաշտօններ կը վարեն, բայց Հայաստանի գաւառաց մէջ քաղաքային պաշտօն վարող Հայեր չը կան կամ շատ քիչ են։ Հայք ի բնէ պատերազմասէր չեն, և ի վաղուց անտի ուրիշ ցեղերէ անդադար հարստահարուելով և ծնւելով Թուրքիոյ մէջ սովորած են ուրիշներու առջև. նուստ գիրք բռնել և ճշմարտութիւնը չը յարգել, ընթացք մը որ մանաւանդ արեւմտեան ազգաց զգուսնը կուտայ։

Ռուսիոյ մէջ ուր հայք աւելի մեծ անձնական ազատութիւն կը վայելին քան ի Թըրքաստան, նաեւ աւելի լաւ կը դաստիարակուին և արտօնութիւն ունին մտնել զինուորական ծառայութեանց մէջ, շատք ի Հայոց նշանաւոր եղած են։ Վերջին պատերազմին տակն Ասիոյ կողմը Ռուսիոյ զօրապետաց մէջ ամենէն նշանաւորը էին Լուրիս Մէլիքով, Լազարէֆ և Տէր Ղուկասով հայ զօրապետները։

Այս ազգին զխաւոր թերութիւնը, ինչպէս կրէ Հայ մատենագիր մը, անմիաբանութիւնն է որ արդիւնք է անձնասիրութեան։ Կը թուի թէ այս ցեղին հին մուրութիւնն է այս, քանզի կը յաւելու նոյն մատենագիրը թէ այս անմիաբանութիւնն եղած է պատճառ Հայոց իրենց թագաւորութիւնը կորսնցնելու։

Ինչպէս հին ատենը, նոյնպէս հիմա Հայոց զխաւոր գործն եղած է երկրագործ ու թիւն և վաճառականութիւն։ Իրիւ վաճառական էին և են ցարդ երեւիլի, և օտար երկիրներում մէջ ապրող Հայոց մէջ կը գտնուին շատեր որ մեծ հարստութիւն դիպած են։

Գալով բնիկ հայոց, ասոնց զխաւոր գործըն է երկրագործ ու թիւն և վաճառականութիւնը, բայց մեծամեծ քաղաքներում մէջ Հայոց մեծագոյն մասն արուեստագէտ է, ինչպէս՝ ոստայնակ, խաղախորդ, ներկարար, պլովքըն հանգերձ, կան նաեւ պղնձագործք, երկաթագործք, ոսկերիք, դերձակը, խոհարարք, հացագործք, և որ ի կարգին նաեւ սեղանաւորաց և զխաւոր վաճառականաց շատերն Հայ են։*)

*) 1. Պարսից, 2. Մարաց կամ սկիւթացոց և 3. Ասորեստանայց։ Եթէ չը յիշենք Ակկադիեանը—չորրորդ՝ վանայ։

*) Etudes sur les inscriptions assyriennes de Persepolis etc. Padoue. 1850.

*) A. D. Mordtmann—Entzifferung und Erklärung der armenischen Keilinschriften von Van und der Umgegend, Ի Zeitsch. D. M. Ges. 1872, հմր 465—696.

*) Փառք Աստուծոյ, որ գտնվեցաւ վերջապէս Տրոսոսքի պէս մի դիտող և աշխու մարդ, որը շատ ուրիշ օտարազգիների նման չէ հաստատում թէ Հայերը միայն վաճառականութեամբ և չար յիւրութեամբ են պարագլուծուի։ Տրոսոսքի նման

Գիտողութեան արժանի է որ Հայաստանի այլ և այլ քաղաքացի Հայք Կ. Պօլսոյ մէջ մի արուեստի կամ գործոյ կողմանէն չանաւոր են. գործընտիր, կոստանդնուպոլսոյ զիւսուոր սեղանաւորք են ի բնէ Ալեքսանդրի, զիւսուոր վաճառականք են Կեսարացի և Արարկիլիցի, երեւելի բեռնակիրք կուգան ընդհանրապէս ի Վանայ և ի Մշոյ, խոհարարք և պահապանք ի Յէրաստիոյ, նա մանաւանդ եւ հանդիպած եմ գիւղաքաղաք մը (Քէմախ) ուսկից կեղնեն ամենէն աղէկ արձարարք (Թաշմիս)։ Նաեւ թուրք նաւաւարաց շատերը Քէմախցի են որ է քաղաք Եփրատայ քով յարեմոյից հարաւոյ երգնայի։ Այն կամ Արարկիլի գրեթէ չը կայ ընտանիք որ մարդ չունենայ Կոստանդնուպոլիս։ Երբ ասոնք բուսական հարստութեամբ կը դառնան ի հայրենիս, բնական կրտսերագոյն անգամ կը բռնեն անոնց տեղը. և այնպէս ընհանուր է, որ կըսուի թէ վերջիշեալ երկու քաղաքացի մէջ երկուստարդ գրեթէ չի տեսնուիր, ամենքը կին, տղայք և ծերունիք են։

Մեծամեծ քաղաքներու մէջ Քրիստոնեայք, որ շատուր և հարուստ են, կարող են իրենք զիրենք պաշտպանել. սակաւի քորդն ալ անոնց վախ չի տար բայց միայն քաղքէն դուրս ամայի տեղեր, և կամ երբ մեծագին վաճառք կը տանին փոստաւոր ծամբաներէ։ Հայոց համար անտանելի է սակայն իրենց թուրք քաղաքացիաց և պաշտօնատարաց ամբարտաւանութիւնը և արհամարհանքը զոր կը թափեն հայոց վրայ իբրեւ ստորնագունից և անարգաց քան զինքենաւ։ Արդարութիւն անգամ գտնել շատ անգամ դժուարին է, երբ Մահմետական է հակառակորդը, բայց միայն ստակի մեծ գումարներ վաճառելով։

Հայոց վիճակը թէև անտանելի չէ մեծամեծ քաղաքներու մէջ կամ անոնց մօտերը, սակայն զիւղերու մէջ դժնդակ է։ Արդէն ըսինք թէ Հայք որչափ մեծ նւթիւն կը կրեն ոչ միայն Պարսիկ քրդաց ասպատակութենէն, այլ և վրանաբանի ցեղերուն տարեկան չուրէն։ Թէպէտ այս վերջինը շատերն անմիտ հովիւներ են, կը գրանուին սակայն անոնց մէջ յիւզակարար լոյ մարդիկ, որոց աւագակութիւնները կը մնան անպատիժ, քանզի օգնութիւն և պաշտպանութիւն ունին իրենց ցեղապետներէն։ Թող այս հարուածները որ կուգան Հայոց վրայ թափառական և լեռնաբանի քրդերէ, Հայ և Քուրդ գիւղացիք կը հարստահարուին նաեւ չարաշար իրենց Պէյերէն և աղաներէն։

Երկրին շատ մասերուն մէջ, ինչպէս Չարսանձագ, Քեզի, Ճապաղջուր, Սասուն և ուրիշ տեղեր, որոց կողմէն զրկուած գանգատի և ողբոյ աղերսագիրներով լի է Պատրիարքարանի զիւանդ, իւրաքանչիւր տեղւոյ զիւսուորք, թէ թուրք և թէ Քուրդ, կընեն ինչ որ կընէին ժամանակաւ։ Եւրօպայի մէջ այլ և այլ տեղերու բռնակալք (տէրէպէյի)։ Այս զիւսուորք անպատիժ կը հարստահարեն զիւղացիս որ գրեթէ գերի են, յափշտակած են բռնութեամբ անոնց հողերը, և վարչութեան այժմու վիճակին նայելով արդարութիւն գտնել անկարելի է։

Առաջին կարգի կարեւոր խնդիրներէն մին որուն պարտի հոգ տանելի Բ. Գուռը՝ հոյային խնդիր է, որ այնչափ աւելի կը դառնանայ, որչափ գիւղացին կը տեսնէ թէ անհար է իրեն իրաւունք և արդար

ութիւն գտնել, և զիւսուորք կը տեսնէ ընդհանրապէս թէ հաւանականութիւն չը կայ որ կորսնցունէ կալուածները զորս ինք կամ իւր նախնիներն յափշտակած են յանրաւր։

(Հայրենիք)

ՀԱՅՈՑ ԽՆԴԻՐ

Շարունակում ենք թարգմանել «KAB-KAZB» լրագրից նրա յօդուածը հայոց խնդրի մասին։

Նոյն իսկ Կ. Պօլսի մէջ պակաս չեն այն պիսի լրագիրներ, որոնք առողջ հասարակական կարծիքի արտայայտողներ են և պաշտպանում են թիւրքաց ճիշտ տեսակէտը հայոց խնդրի վրա։ Ահա ի միջի այլոց ինչպիսի մտքեր է յայտնում յոյն թիւրքական յայտնի «Phare du Bosphore»։ «Ներկայումս հայոց խնդրի վերաբերութեամբ սկսված դիպլոմատական բանակցութիւնները զանազանվում են չորսուորական և յունական խնդիրների առիթով կատարված բանակցութիւններից նրանով, որ վերջին դէպքում դիպլոմատները ի նկատի ունեն իսկ թիւրքիայից մի քանի նահանգներ առանց վարձատրութեան, իսկ այժմ ի նկատի ունեն բարեկալ թիւրքիայի սկիական նահանգները, որպէս զի Բ. Գուռը դրութիւնը այնտեղ հաստատ լինի։ Հայերը իսկօք, գործունեայ և առաջադիմութեան համար ընդունակ ժողովուրդ են և նրանց բարօրութիւնը ոչ թէ թիւրքաց կայսրութեան թուլութեան պատճառ կը դառնայ, այլ ընդհակառակը նրա ոյժի պայմանը կը լինի»։ Յիշեալ լրագիրը մասնացոյց է անում ուսաց քաղաքականութեան վրա կովկասում և նկատում է, թէ հայերի զարգացման նպատող այդ քաղաքականութիւնը Ռուսաստանի համար ամենապատւական պտուղներ տուեց։

Թիւրքաց կայսրութեանը նշանուոր վրտանդ է սպառնում, եթէ նա իր հպատակ հայերին աւելի ազատամիտ հիմնարկութիւններ չի շնորհի։ Այն տխուր դրութիւնը, որի մէջ գտնվում են Փոքր-Ասիայի բոլորտնները վայրենի ցեղերի բռնութիւնների և յափշտակութիւնների պատճառով, կովկասը նրանց համար ցանկալի կենտրոն է դարձնում։ Այդ ձգտմանը խանգարելու համար, լրագրի կարծիքով, Բ. Գուռը պէտք է թողնի իր նախապաշարմունքը, որ ստիպում է նրան հայերի վերաբերութեամբ Ռուսաստանի գործադրած քաղաքականութեան հակառակին հետեւել, որ նա մինչև այժմ երբեք չէր անում, այն է բացարձակ հալածել հայերին։

Մենք մեր կողմից միայն կարող ենք միանալ այդպիսի խելացի խորհուրդներին, որովհետեւ մեր կառավարութիւնը միատեսակ հոգում է իր բոլոր հպատակների բարօրութեան մասին առանց կրօնի և ազգութեան խտրութեան և ներկայ հարցի վերաբերութեամբ, չը մտածելով իր առանց այդ էլ ընդարձակ երկրի լայնացնելու մասին, ցանկանում է թիւրքահպատակ հայերի վիճակի բարւոքումը բարձր մարդասիրական զգացմունքից զրգված և ի նկատի ունեւով Բ. Գուռը շահերը։

Ինչպէս վերեւ նկատեցինք, հայոց խնդրի լուծումը ահագին դժուարութիւններ է ներկայացնում, որոնք մանաւանդ մեզ հասկանալի են, որովհետեւ մենք կովկասում գործ ունենք մի քանի քիւրդ ցեղերի հետ, որոնք թափառական կենք են վարում, և գիտենք, թէ որքան պէտք է աշխատեն տեղական իշխանութիւնները մշտաբանակ

խաղաղ ազգաբնակչութեան դրութիւնը կատարելապէս ապահովելու համար։

Հասկացողութիւն կազմելու համար թէ որքան դժուար է թիւրքաց Հայաստանի մէջ մտնելի վերանորոգութիւնների մշակելը, մենք պէտք է յիշենք, որ այդ երկիրը գրեթէ ամբողջ աշխարհագնտի ամենայնուրեւ անկուն է, որտեղ գոյութիւն ունի տասնորդ հարկի հաւաքելու կորստաբեր ձեւը կապալառուների ձեռքով, որտեղ դատարանները մի և նոյն ժամանակ վարչական անձինք են, որտեղ քիւրդը կողոպտում է հային մեծ մասամբ անպատիժ, որտեղ գրեթէ բոլորովին չը կայ ժողովրդական ուսումնարան, որտեղ աստիճանադիմների կամայականութիւնը չափ չունի և որտեղ կառավարութիւնը ճիշդ տեղեկութիւն չունի մինչև անգամ ազգաբնակչութեան թւի մասին։ Այն քիչ բանը, որ յայտնի է Փոքր-Ասիայի հայերի մասին, հաւաքված է եւսրօպացիների և օտարահպատակ հայերի աշխատանքներով։

Հետեւեալ յօդուածներից մէկի մէջ մենք կը հաղորդենք մեր ընթերցողներին թիւրքաց Հայաստանի այժմեան դրութեան և մշակվող վերանորոգութիւնների մասին։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լօնդոնից հեռագրում են լրագիրներին, հոկտեմբերի 3-ին հետեւեալով։ Երէկ բոլոր Անգլիայի մէջ սարսափելի փոթորիկ բարձրացաւ, որը ահագին վնասներ հասցրեց. ափի վրա բազմաթիւ, նաեւ խորտակվեցան. շատ մարդիկ ըսպանվեցան և այլանդակվեցան. հեռագրական գծերի մեծ մասը կտրված են. այլ պետութիւնների և գաւառների հետ հաղորդակցութիւնը մատամբ կտրված է։ Երկրաշարժում աղիտացիան զօրեղանում է։ Լոնդային լիգայի ժողովները Գուբրինում, Լիւբրիում և ուրիշ քաղաքներում յայտնեցին, որ արեւդատոները իրանց վարձական վճարը չեն մտցնի, մինչև որ Պարնէլ ազատված չը լինի։

—Երկրորդի ընկերութեան Գուբրինից հոկտեմբերի 3-ին հեռագրում են։ Այսօր կալանաւորվեցան Սլայգո կոմսութեան պատգամաւոր Սիկստոն և հոլանդի լիգայի քարտուղար Վիլին. նոր կալանաւորութիւններ են սպասվում։

—Վալիւտոնից լրագիրներին հեռագրում են հոկտեմբերի 3-ին։ Հոկտեմբերի 14-ին Շարլ Գիւսօ դատարան բերվեցաւ Գարֆիլդի սպանութեան մէջ մեղադրվելու համար։ Մեղապարար իրան մեղաւոր չը համարեց։ Պաշտպանի առաջարկութեան համեմատ դատաստանական քընտրութիւնը մինչև նոյեմբերի 7-ն է յետաձգված։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկացիների ամենանոր չաճաւտ ձեռնարկութիւնների թւին պատկանում է և Լուդաւոյ Լրագիրը։ Ահագին շոգենաւը անդադար չուր։ Մեծթիւի և Նոր-Օրլէանի միջով, Միսիսիպի գետի վրա, և կանգնում է աւելի նշանաւոր քաղաքների և տեղերի մօտ, հաւաքում է այն բոլոր նորութիւնները, որոնք կը հետաքրքրեն գետափի վրա ապրող բնակիչներին։ Հինգ մի և նոյն շոգենաւի վրա տպվում են ստացած լուրերը. այդ բանի համար շոգենաւի վրա շինված են սենեակներ խմբագրութեան և էկզպէդիցիայի համար. կայ մէկ անգին տպարան և մինչև անգամ օրտոներ ձիւներին համար, որոնք անհրաժեշտ են բեպօրտեօրներին ճանապարհորդելու համար չրջականերում։

Կաթօլիկ հոգեօրականութիւնը աշխատում է, որքան կարելի է, արգելել կաթօլիկներին գաղթել Ամերիկայի մեծ բնակչութիւն ունեցող քաղաքները, և աշխատում է ուղարկել իրանդացիներին և այլ կաթօլիկ գաղթականներին դէպի հարաւ. աւելի քիչ բնակեցրած նահանգները, Այդ նպատակով հոգեօրականութիւնը ձեռք բերեց 15,000 հեկտար հող Արկանզասում, այդ մի և նոյն նահանգում դիտաւորութիւն ունեն

գաղթել և բնեկդիտեանները, որոնք եւս են բերել այնտեղ 40,000 հեկտար հող, և երկուտներ, որոնք արդէն միտք ունեն գնել 2,500 հեկտար հող։ Լսվում է, որ 800 ընտանիքից բաղկացած մէկ լեհական գաղթականութիւն արդէն օգուտ քաղեց այդ արտօնութիւններից և նորերուն բնակութիւն հաստատեց Արկանզասի պտղատու հողերի վրա։

Պրօֆէսոր Մակս Միւլլեր հաղորդում է, որ երկու եպիսկոպոսներ, որոնք սովորել են Օկսֆորդում իր մօտ, իրանց հայրենիքում գտել են սանսկրիտեան ձեռագիրներ։ Ձեռագիրները պարունակում են իրանց մէջ յայտնի «Ազամանդեայ դանակ»-ի բնագիրը և բուդդայականների աստուածաշնչի սրբազան կանօնի մէկ մասը, որը մինչև այժմ յայտնի էր միայն տիբեթեան և մօնղոլական թարգմանութիւններից. իսկ բնագիրը անդարձ կորած էր համարվում։ Պրօֆէսորը միշտ ենթադրում էր, որ սանսկրիտեան ձեռագիրները պէտք է թագնված լինէին Չինաստանում, որովհետեւ ամենապաղ ժամանակներում չինական բուդդայականները թափառում էին Հնդկաստանի սրբազան տեղերում և այն տեղերից իրանց հետ դուրս էին բերում ձեռագիրներ, բայց նրանց գիւտը եպիսկոպոսը բոլորովին անսպասելի բան էր իր համար։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՆՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 9 հոկտեմբերի «Привит. Вест.» հաղորդում է, որ իշխան Իմերետինսկի նշանակված է զինուորական նաւային վարչութեան զիւսուոր։ «Новое Время» լրագիրը լսել է, որ շուտով կը քննվի մի նախագիծ խորօսնակայա և Եկատարինսու լավակայա նահանգների բնակիչ երկրագործ հրէաների վարչական և հողային կազմակերպութեան մասին։ Տնտեսական ընկերութիւնը միջնորդում է հրաւիրել Մոսկվայի աշխարհաւնդէսին ռուս գիւղատնտեսների ժողովը։ «Варшавя Ве́домости» լրագիրը հաղորդում է. դրամական վաճառանոցը հետզհետէ վատանում է։ Գիսկօնո 7 1/2 օ, վաղաժամ հասուցումները սահմանափակված են։ Պարտքերը արժէթղթերի դրաւակնով 80% դժուարացած են։ Ընթացող հաշւի տոկոս 4 1/2 է իջեցրած։ Երկրւղ են կրում, որ անանիներ շատ կը յայտնվեն։

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 10 հոկտեմբերի։ «Порядокъ» լրագիրը հաղորդում է հոկտեմբերի 8-ից, գաղթականական հարցի էկսպերտները Գալաքանին նախագահ ընտրեցին խմբագրական մասնաժողովին յանձնված է հարցերի ընդարձակ պրօգրամ մշակել նոյնպէս և համայնքների կազմակերպութեան մասին։ Հոկտեմբերի 3-ին քննվում էին միջոցներ հասարակական կրպակներին նպատակելու համար։ Կառավարութիւնը զբաղված է սե հողեր չունեցող երկիրների անպտղաբերութեամբ։ Կրա դէմ միջոցների քննութիւնը մտադիր են յանձնել զեմստովոնի էկսպերտներին։

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳ, 9 հոկտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ռ. 50 կ., երկրորդ 92 ռ. 75 կ., երրորդ 93 ռ. 50 կ., չորրորդ 92 ռ. 75 կ., ներքին առաջին 5% փոխառութեան տոմսակը արժէ 220 ռ. 75 կ., երկրորդ 215 ռ. 25 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ռ. 12 կ., երկրորդ 90 ռ. 25 կ., երրորդ 90 ռ. 25 կ., օսկի 7 ռ. 67 կ.։ Ռուսաց 1 ռ. Լօնդոնի վրա արժէ 25,90 պէնս, Ամստերդամի վրա արժէ 212 ռ. 25 կ., Զամբուրգի վրա արժէ 273 Ֆրանկ 75 սանտիմ։ Բօսայի տրամադրութիւնը թոյլ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԵՐՈՒՆԻ